

**ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՎԱՐՔԱՎԱՆՈՆ**

/էթիկայի նորմերը/

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն փաստաթուղթն ուսուցիչների, մանկավարժական աշխատողների /այսուհետև՝ ուսուցիչ/ մասնագիտական գործունեության վարքականոն է, որը, ելնելով ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պարտականություններից և իրավունքներից, ուրվագծում է հարաբերությունների այն ոլորտը, որը ենթակա է բարոյական կարգավորման:

Ուսուցչի էթիկայի նորմերի ձևավորման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքային մոտեցումները.

- դպրոցում են դրվում քաղաքացու արժեքային համակարգի և աշխարհայացքի ձևավորման հիմքերը,
- երեխայի կարիքին, նախասիրություններին, կարողություններին համապատասխան որակյալ կրթություն ստանալու իրավունքի կարևորում,
- առանց խտրականության բոլոր երեխաների՝ բարենպաստ կրթական միջավայր ունենալու իրավունքի հարգում,
- կրթության գործընթացներում ազգային ու համամարդկային բարոյական բարձրագույն արժեքներին հետևելու սկզբունքի ապահովում,
- ուսումնական գործընթացում մանկավարժի մեծ ազդեցության ու դերի գիտակցում,
- ուսուցչի իրավունքների ու պարտականությունների փոխկապակցվածության և մասնագիտական գործունեության մեջ նրա ինքնուրույնության ու ստեղծագործականության շեշտադրում:

**ԲԱԺԻՆ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ**

**1.1.** Ուսուցչի էթիկայի նորմերի փաստաթղթային ձևակերպման նպատակներն են.

- սահմանել ուսուցչի մասնագիտական էթիկայի հիմնադրույթները,

- նպաստել կրթական գործընթացներում երեխաների իրավունքների ու ազատությունների երաշխավորմանը,
- կարգավորել ուսուցչի հարաբերությունները սովորողների, ծնողական համայնքի, մանկավարժական համակազմի հետ,
- նպաստել ուսուցիչների մասնագիտական վարկանիշը, աշխատանքի որակն ու մասնագիտական պատիվը բարձր պահելուն,
- նպաստել կրթական ու դաստիարակչական հաստատությունների մշակույթի ձևավորմանը՝ հիմնված վստահության, պատասխանատվության, արդարության և ստորև թվարկվող այլ սկզբունքների վրա:

**1.2.** Ուսուցչի էթիկայի նորմերի հիմնադրույթները սահմանվում են՝ ելնելով Մարդու և երեխայի իրավունքների համընդհանուր հռչակագրերի, ՀՀ Սահմանադրության, Երեխայի իրավունքների մասին, Կրթության մասին և Հանրակրթության մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության՝ ուսուցչի մասնագիտական գործունեությանն առնչվող որոշումների, Կրթության և գիտության նախարարի հրամանների, նորմատիվ այլ փաստաթղթերի, միջազգային իրավունքի, բարոյականության համամարդկային դրույթների, ինչպես նաև հայկական դպրոցի դարավոր ավանդույթների ոգուց:

**1.3.** Ուսուցչի մասնագիտական էթիկայի նորմերի սկզբունքներն են.

- հարգանք երեխայի իրավունքների ու ազատությունների հանդեպ
- մարդասիրություն
- հոգատարություն
- օրինապահություն
- պատասխանատվություն
- ժողովրդավարություն
- համագործակցություն
- հանդուրժողականություն
- պատիվ և արժանապատվություն
- հայրենասիրություն
- արդարամտություն
- սկզբունքայնություն
- բարյացկամություն
- ինքնատիրապետում
- անաչառություն

- արհեստավարժություն
- ազատախոհություն
- ուղղամտություն
- հարգանք՝ կրթական գործընթացի մասնակից կողմերի հանդեպ:

Վերոնշյալ ցանկը սպառիչ չէ և կարող է լրացվել նշված սկզբունքներին չհակասող և իրենցից բարոյական արժեք ներկայացնող այլ սկզբունքներով ևս:

## **ԲԱԺԻՆ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՈՃԸ**

**2.1.** Ուսուցիչը պետք է նվիրված լինի իր աշխատանքին, բարձր պահի մանկավարժի մասնագիտության վարկանիշը և մեծ պատասխանատվությամբ վերաբերվի իր մասնագիտական պարտականությունների կատարմանը:

**2.2.** Ուսուցիչը պետք է պահանջկոտ լինի սեփական անձի նկատմամբ, լինի բարեխիղճ ու պարտաճանաչ, շարունակ ձգտի ինքնակատարելագործման, իր գործունեությամբ լինի դրական օրինակ աշակերտների համար:

**2.3.** Ուսուցիչը պետք է հետևողականորեն զբաղվի ինքնակրթությամբ, աշխատի իր որակավորման բարձրացման ուղղությամբ և որոնի աշխատանքի ավելի արդյունավետ մեթոդներ:

**2.4.** Ուսումնական գործընթացի որակի բարելավման նպատակով ուսուցիչը պետք է կատարի ինքնադիտարկում:

**2.5.** Ուսուցիչը պետք է գնահատի ոչ միայն սովորողներին, այլև դասավանդման գործընթացը, կիրառված մեթոդները, խոսքային ձևակերպումները՝ դրանք շտկելու և կատարելագործելու միտումով:

**2.6.** Ուսուցիչը պետք է լինի ազնիվ և օրինապահ քաղաքացի: Նրա համար պետք է անթույլատրելի լինի կոռուպցիան և պետք է զերծ մնա ինչպես կաշառք վերցնելուց, այնպես էլ որևէ մեկին կաշառք տալուց:

**2.7.** Ուսուցիչը պատասխանատու է.

- իր կատարած մանկավարժական աշխատանքի որակի և արդյունքների համար.
- իրեն վստահված երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան պաշտպանվածության համար.

- պաշտոնեական պարտականություններով իրեն վերապահված գործառույթների լիարժեք կատարման և իրեն տրամադրված ռեսուրսների նպատակային օգտագործման ու պահպանության համար:

**2.8.** Ուսուցիչն իր աշխատավայրը և աշխատաժամանակը պետք է ծառայեցնի բացառապես մասնագիտական պարտականությունների կատարմանը:

**2.9.** Ուսուցչի հեղինակությունը պետք է հիմնվի իրազեկվածության, արդարության, տակտի զգացումի և սովորողների նկատմամբ ցուցաբերած հոգատարության վրա:

**2.10.** Ուսուցիչը պետք է ունենա լեզվական բարձր մշակույթ, բացառի այլոց ինքնասիրությունն ու մարդկային արժանապատվությունը վիրավորող բառերի և արտահայտությունների կամ ժեստերի գործածությունը, զերծ մնա գռեհկաբանությունից և ժարգոնից:

**2.11.** Ուսուցիչը պետք է հետևի իր արտաքին տեսքին և հագուստին՝ նախընտրելով ուսումնական գործընթացը չխանգարող պատշաճ ոճ և ձև:

**2.12.** Ոգելից խմիչքների չարաշահումը և թմրամիջոցների օգտագործումն անհամատեղելի են ուսուցչի մասնագիտության հետ:

### **ԲԱԺԻՆ 3. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՆԵԿՏԻՎԻ, ԾՆՈՂՆԵՐԻ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

#### **1. ՈՒՍՈՒՑԻՉ - ԱՇԱԿԵՐՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1.** Ուսուցիչն աշակերտների հետ իր հարաբերությունները պետք է կառուցի փոխադարձ հարգանքի վրա: Նա պետք է հարգի աշակերտների անհատականությունը՝ անկախ նրանց տարիքային և անձնային առանձնահատկություններից, դավանանքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծնողների ունեցվածքի, հասարակական դիրքի կամ որևէ այլ կարգավիճակի հետ կապված հանգամանքից:

**3.2.** Ուսուցիչը պետք է անաչառ ու բարյացակամ լինի բոլոր աշակերտների նկատմամբ, հետևողական՝ նրանց կրթական պահանջների բավարարման գործում, պատրաստակամությամբ արձագանքի ծագած բոլոր խնդիրներին:

**3.3.** Ուսուցիչը պետք է նպաստի սովորողների մեջ դրական անձնային հատկանիշների և միջանձնային որակների զարգացմանը, այդ թվում՝ ինքնուրույնության, ինքնավերահսկման, ինքնակրթության, համագործակցելու և ուրիշներին օգնելու պատրաստակամությանը և այլն:

**3.4.** Ուսուցիչը պետք է հարգի իր սովորողների մտքի, խղճի և դավանանքի ազատությունը, պատշաճ ուշադրություն դարձնի նրանց արտահայտած կարծիքներին ու հայացքներին և նրանց չպարտադրի իր սեփական հայացքները, դասընկերների

ներկայությամբ չհասցնի անձնական վիրավորանքներ կամ մատնանշի նրա անձնային բացասական կողմերը:

**3.5.** Ուսուցիչը պետք է պահանջկոտ և հետևողական լինի բոլոր սովորողների նկատմամբ. պահանջկոտությունը պետք է հիմնավորված լինի և ունենա դրական ուղղվածություն:

**3.6.** Ուսուցիչը պարտավոր է գաղտնի պահել սովորողի մասնավոր կյանքի անձեռնմխելիությանն առնչվող տեղեկությունը, ինչպես նաև նրա կողմից իրեն վստահված գաղտնիքը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Սովորողի անձին վերաբերող տեղեկությունը ուսուցիչը կարող է օգտագործել բացառապես ի շահ սովորողի:

**3.7.** Ուսուցիչը պետք է անաչառ լինի իր գնահատականների մեջ, դրանք պետք է հիմնավորված լինեն և անկողմնակալ: Սովորողների նվաճումները գնահատելիս ուսուցիչը պարտավոր է ձգտել օբյեկտիվության և արդարության: Նա չի կարող բարձրացնել կամ իջեցնել սովորողների գնահատականները սեփական հայեցողությամբ, առաջադիմությունը արհեստականորեն բարձրացնելու նպատակով նրանց փոխարեն ուղղել թույլ տրված սխալները կամ քողարկել դրանք:

**3.8.** Ուսուցիչը պետք է մեկնաբանի իր նշանակած գնահատականները, իսկ սխալ գնահատում հայտնաբերելու դեպքում՝ անմիջապես ուղղի գնահատականը:

**3.9.** Ուսուցչի կողմից իր սովորողին վճարովի կրթական ծառայությունների մատուցումն արգելվում է:

**3.10.** Ուսուցիչն իրավունք չունի իր կատարած աշխատանքի դիմաց աշակերտներից կամ նրանց ծնողներից լրացուցիչ վարձատրություն ակնկալելու և պահանջելու՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Եթե ուսուցիչը կատարում է մասնավոր աշխատանք կամ զբաղվում է մասնավոր գործունեությամբ (պրակտիկայով), ապա նրա վարձատրության պայմանները պետք է համաձայնեցվեն աշխատանքի սկզբում և գրանցվեն պայմանագրում:

## **2. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՀԵՏ**

**3.11.** Ուսուցիչները պետք է ձգտեն միմյանց հետ ակտիվ համագործակցության, փոխադարձաբար հարգեն և օգնեն իրար, կարևորեն միմյանց և ուսումնական հաստատության շահը: Ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը:

**3.12.** Ուսուցիչը պարտավոր է պաշտպանելու ոչ միայն իր, այլև գործընկերոջ հեղինակությունը: Սովորողների կամ այլ անձանց ներկայությամբ նա չպետք է նսեմացնի գործընկերներին:

**3.13.** Ուսուցիչն իրավունք ունի ազատ կարծիք հայտնելու գործընկերների և դպրոցի ղեկավարության աշխատանքի մասին: Այդուհանդերձ, ցանկացած քննադատություն և դիտարկում պետք է լինի անաչառ և հիմնավոր, կառուցողական, արվի տակտով, բարյացակամ և ոչ վիրավորական շեշտով: Չի կարելի ստորացնել քննադատության ենթարկվող մարդուն: Ուսուցիչներին առնչվող կարևոր հիմնախնդիրները պետք է լուծվեն նրանց ազատ և բաց քննարկումների միջոցով:

**3.14.** Դպրոցի ղեկավարությունն իրավունք չունի ուսուցչից պահանջելու կամ սեփական նախաձեռնությամբ՝ առանց ուսուցչի գիտության, հավաքելու նրա անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ, եթե դա ուղղակիորեն չի առնչվում վերջինիս կողմից իր աշխատանքային պարտականությունների կատարմանը:

**3.15.** Գործընկերների և ղեկավարության աշխատանքային գործունեության գնահատումը ուսուցչի իրավունքն ու պարտականությունն է, ուստի արգելվում է քննադատության համար ուսուցչի հետապնդումը: Քննադատությունը պետք է լինի ներքին, այսինքն՝ արտահայտվի ուսումնական հաստատության ներսում և ոչ թե դրա սահմաններից դուրս: Այն պետք է արտահայտվի դեմ առ դեմ: Բամբասանքն անհանդուրժելի է դպրոցում կամ ուսումնական այլ հաստատությունում:

**3.16.** Ուսուցիչները պարտավոր են խուսափել կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծելուց և ընդհարումներ հրահրելուց: Տարաձայնությունների առաջացման դեպքում նրանք պետք է ձգտեն հարթել դրանք՝ ցուցաբերելով կառուցողական մոտեցում:

**3.17.** Ուսուցիչները չպետք է թաքցնեն գործընկերների գործած սխալներն, պետք է օգնեն ուղղել դրանք:

**3.18.** Ուսուցիչն ունի խրախուսվելու իրավունք: Մասնագիտական գործունեության ոլորտում նրա անձնական ձեռքբերումները չպետք է մնան ստվերում:

**3.19.** Ուսուցիչն իրավունք ունի դպրոցի ղեկավարությունից պահանջելու ուսումնական հաստատության գործունեությանն առնչվող ցանկացած տեղեկատվություն, եթե դա կարող է այս կամ այն կերպ օժանդակել նրա աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

**3.20.** Ուսումնական գործընթացում ուսուցիչը սովորողների անհատականության զարգացման և նրանց հոգեկան, հոգեբանական ու ֆիզիկական առողջությունը պահպանելու նպատակով պետք է համագործակցի հոգեբանի, բժշկի, սոցիալական մանկավարժի, աշակերտների ծնողների, ուսուցչի օգնականի հետ:

### **3. ՈՒՍՈՒՑՉԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ**

**3.21.** Ուսուցիչը պետք է հարգալից և բարեկամաբար վերաբերվի աշակերտների ծնողներին, նրանց ընդունի որպես գործընկեր և աջակից:

**3.22.** Ուսուցիչը պետք է աշակերտների ծնողներին պարբերաբար տեղեկություն տրամադրի նրանց երեխաների ուսումնառության վերաբերյալ, ինչպես նաև խորհրդատվություն՝ նրանց կրթական կարիքների առնչությամբ:

**3.23.** Ուսուցիչը չպետք է հրապարակի ինչպես երեխաների, այնպես էլ ծնողների՝ միմյանց մասին իրեն վստահաձ կարծիքներն ու դիտարկումները:

**3.24.** Ծնողների հետ ուսուցչի հարաբերությունները ոչ մի կերպ չպետք է ներազդեն աշակերտների գնահատականի կամ կրթական այս կամ այն ծրագրերում նրանց ներառելու հանգամանքի վրա:

**3.25.** Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների և աշակերտների գնահատականի վրա ոչ մի կերպ չպետք է ներազդի աշակերտների ծնողների կողմից ուսումնական հաստատությանը ցուցաբերված աջակցությունը՝ անկախ դրա ձևից, չափից, կարևորությունից և բարդության աստիճանից:

### **4. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

**3.26.** Ուսուցիչը պետք է ակտիվորեն մասնակցի իր համայնքի, մարզի, պետության ընթացիկ կյանքին, նպաստի մշակութային արժեքների պահպանությանն ու հասարակական երկխոսությանը:

**3.27.** Ուսուցիչը պետք է նպաստի հասարակական համաձայնությանը, ձգտի դրականորեն հաղթահարել կոնֆլիկտները, բացահայտի տարաձայնությունների և կոնֆլիկտների պատճառները և անհրաժեշտության դեպքում կիրառի իր գիտելիքներն ու հմտությունները համայնքում համերաշխություն և համագործակցություն վերահաստատելու համար:

**3.28.** Ուսուցիչը պետք է գիտակցի և պատասխանատվությամբ կատարի իր քաղաքացիական պարտականություններն ու սոցիալական դերը, ծառայի որպես օրինակելի քաղաքացի:

**3.29.** Ուսուցիչը պետք է ընտրի իր իրավունքների և ազատությունների իրացման այնպիսի ձևեր և եղանակներ, որոնց հետևանքով չեն խախտվում երեխաների իրավունքները, այդ թվում և՛ չընդհատվող կրթության իրավունքը:

#### **ԲԱԺԻՆ 4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻԱ**

**4.1.** Ուսուցիչն իրավունք ունի օգտվելու տեղեկատվության տարբեր աղբյուրներից՝ չխախտելով հեղինակային իրավունքի նորմերը:

**4.2.** Ուսուցիչը կարող է ազատորեն ստեղծագործել՝ օգտագործելով իրեն հասանելի տեղեկատվությունը, բացառելով ապատեղեկատվությունը և գիտականությանը հակասող գաղափարների և դրույթների տարածումը:

**4.3.** Ուսումնական գրականություն ընտրելիս և նոր ուսումնական նյութեր ու մեթոդներ մշակելիս ուսուցիչը պարտավոր է հետևել մասնագիտական համապատասխանության և պարկեշտության պահանջներին:

**4.4.** Անթույլատրելի են տեղեկությունների կողմնակալ խեղաթյուրումը, հեղինակի փոփոխությունը:

**4.5.** Ուսուցիչներն ու վարչական աշխատողները պարտավոր են խնայողաբար և արդյունավետորեն օգտագործել դպրոցի նյութական և այլ պաշարները: Նրանք չպետք է անձնական նպատակներով օգտագործեն կրթական հաստատության ունեցվածքը և իրենց աշխատաժամանակը:

**4.6.** Կաշառք վերցնելը կամ կաշառք տալն անհամատեղելի են ուսուցչի մասնագիտական էթիկայի հետ:

**4.7.** Ուսուցիչը չպետք է որևէ կերպ ակնարկի նվեր ստանալու ցանկության մասին, ուղղակի ցանկություն հայտնի կամ համաձայնության գա այլ ուսուցիչների հետ՝ սովորողների կամ նրանց ծնողների միջոցով իրեն նվերներ մատուցելու հարցում:

**4.8.** Ուսուցիչը չպետք է դիտավորությամբ իջեցնի իր դասավանդման որակը, որպեսզի սովորողին դրդի դասերից դուրս, մասնավոր հիմունքներով իր կամ մեկ այլ ուսուցչի մոտ պարապելու, քանի որ դա անուղղակի կոռուպցիա է և մասնագիտական պարտականությունների կատարման դիտավորյալ թերացում:

**4.9.** Ուսումնական հաստատության տնօրենը կամ ուսուցիչը սովորողների ծնողների կամ այլ անձանց կողմից կարող են ընդունել ուսումնական հաստատությանը ցույց տրված ցանկացած անշահախնդիր օգնություն, սակայն դա պետք է անել պատշաճ ընթացակարգով: Հասարակությունը պետք է տեղեկացվի նման օգնության



տրամադրման մասին, իսկ օգնություն տրամադրողներին պետք է շնորհակալություն հայտնել հրապարակավ: Օգնության կարգով տրամադրված միջոցները պետք է սահմանված կարգով հաշվառվեն և օգտագործվեն բացառապես կրթական նպատակներով:

## **ԲԱԺԻՆ 5. ՈՒՍՈՒՑՉԻ ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ**

5.1. Ուսուցչի էթիկայի նորմերի կենսագործումն իրականացվում է անհատի գիտակցության և վարքի դրսևորման, իսկ վերահսկողությունը՝ ինքնագնահատման, հասարակական կարծիքի զուգակցման ու սերտ համագործակցության միջոցով:

5.2. Ուսուցչի բարոյական գիտակցությունը, իր արարքներն ու վարքագիծը վերահսկելու ունակությունը խթանելու նպատակով նրան աշխատանքի նշանակելու հենց առաջին օրից պետք է տրվի սույն փաստաթուղթը, որի դրույթները նա պարտավոր է յուրացնել և դարձնել իր մտադրությունների և գործելակերպի ուղեցույց:

5.3. Ուսուցչի բարոյական վարքագծի վրա հասարակական կարծիքի ներգործությունն իրականացնում է ուսումնական հաստատության *էթիկայի հանձնախումբը*: Հանձնախումբը գործում է երկու տարի ժամկետով՝ հասարակական հիմունքներով:

5.3.1. Էթիկայի հանձնախումբը կազմավորվում է ուսումնական տարվա սկզբում տվյալ հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ հաստատված ընթացակարգով և քվեարկությամբ, որով սահմանվում է նաև հանձնախմբի անդամների թիվը. այն կարող է լինել 7-11 ուսուցիչ՝ կախված հաստատությունում աշխատող ուսուցիչների քանակից կամ այլ գործոններից:

5.3.2. Հաստատության էթիկայի հանձնախումբն իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Հանձնախմբի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով: Հանձնախմբի նիստը իրավազոր է հանձնախմբի կեսից ավելի թվով անդամների մասնակցության դեպքում, և որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

**5.3.3.** Հաստատության տնօրենը, հանձնախմբի կազմում չի ընդգրկվում, հանձնախմբի աշխատանքներին չի մասնակցում, ապահովում է պայմաններ հանձնախմբի աշխատանքը կազմակերպելու համար:

**5.3.4.** Հանձնախմբի աշխատանքներում կարող են ներգրավվել ծնողներ, եթե հարցը վերաբերում է «ուսուցիչ-ծնող» հարաբերությանը:

**5.4.** Էթիկայի հանձնախումբը քննության է առնում իրեն ուղղված այնպիսի հարցեր, որոնք անմիջականորեն վերաբերում են տվյալ հաստատությունում աշխատող ուսուցչի կամ մանկավարժական այլ աշխատողի՝ սույն փաստաթղթի դրույթների շրջանակներում մեկնաբանվող վարքագծին կամ գործելակերպին: Այդ հարցերը չպետք է առնչվեն քրեական, վարչական և այլ իրավական պատասխանատվություն առաջացնող խնդիրների հետ:

**5.5.** Քննարկման ենթակա հարցերը հանձնախմբին կարող են ներկայացվել գրավոր դիմումով կամ նամակով: Քննարկման հարցեր կարող են ներկայացնել տվյալ ուսումնական հաստատության խորհրդի անդամները, ուսուցիչները, մանկավարժական այլ աշխատողները, սովորողների ծնողները: Հաստատության սովորողները քննարկման հարցեր կարող են ներկայացնել դասղեկի, դասավանդող ուսուցիչների կամ իրենց ծնողների միջոցով: Քննարկման հարց կարող են լինել նաև զանգվածային լրատվամիջոցներում արտացոլված համապատասխան հաղորդումներն ու թղթակցությունները:

**5.6.** Հանձնախմբին ներկայացված հարցերը (այդ թվում և՛ հարց ներկայացնողի կողմից դիմումը հետ վերցնելու ցանկության դեպքում) պարտադիր ենթակա են քննարկման առնվազն 15-օրյա ժամկետում: Հանձնախումբը հարցի քննարկմանը կարող է մասնակից դարձնել շահագրգիռ անձանց, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև փորձագետների ու մասնագետների:

**5.7.** Քննարկվող հարցերի վերաբերյալ հանձնախումբը ընդունում է որոշում: Այդ որոշումը կարող է պարունակել խրախուսող կամ պարսավող գնահատական: Հանձնախմբի յուրաքանչյուր որոշում գրանցվում է համապատասխան գրանցամատյանում և ստորագրվում հանձնախմբի նախագահի ու քարտուղարի կողմից:

**5.8.** Հանձնախմբի որոշումները եռօրյա ժամկետում տրամադրվում են այն անձանց, ում ներկայացմամբ քննարկվել է և ում հետ կապված է հարցի քննարկումը: Քննարկվող

յուրաքանչյուր հարցի կապակցությամբ հանձնախումբը վճիռ է կայացնում նաև ընդունված որոշումը տվյալ հաստատությունում հրապարակելու վերաբերյալ:

**5.9.** Ուսուցչի ատեստավորման ժամանակ էթիկայի հանձնախմբի կողմից նրան առնչվող հարցերի քննարկումների ու ընդունված որոշումների մասին ամփոփ տեղեկությունը տրամադրվում է հաստատության տնօրենին՝ ատեստավորման փաստաթղթերի փաթեթում ներառելու համար:

**5.10.** Ուսումնական մեկ տարվա ընթացքում նույն անձի մասին երկուսից ավելի անգամ պարսավող գնահատականով որոշումների առկայությունը էթիկայի հանձնախմբին հիմք է տալիս ներկայացնելու առաջարկություն՝ տվյալ անձի նկատմամբ Աշխատանքային օրենսգրգով սահմաաժ կարգով կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ:

**5.11.** Ուսումնական հաստատության աշխատողների ժողովի որոշմամբ, կախված հաստատության առանձնահատկություններից և համայնքում արժևորվող ավանդույթներից, կարող են կատարվել ուսուցչի էթիկայի նորմերի առանձին դրույթների հավելումներ և լրացումներ՝ պայմանով, որ դրանք չպետք է հակասեն սույն փաստաթղթում ամրագրված նպատակներին և հիմնական սկզբունքներին:

Հավելված

**Փաստաթղթում օգտագործված հիմնական հասկացությունների պարզաբանումներ**

1. **Ազնվություն** - ուսուցիչի կողմից իր խոստումը պահելու, խոսքի ու գործողությունների միասնության ձգտելու, կեղծիքով կամ խաբեությամբ չգրադվելու վարքագիծ.

2. **Ակադեմիական ազատություն** - ստեղծագործական և հետազոտական աշխատանքի ազատություն.

3. **Անաչառություն և օբյեկտիվություն** – իր ելույթներում, գործողություններում, անհատ մարդկանց կամ մարդկանց խմբերի նկատմամբ նրանց սեռի, տարիքի, ռասայի, կրոնի պատճառով խտրություն չդնելը, նման երևույթների բախվելիս օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկելը.

4. **Անկեղծություն** – անձին և նրա արարքները բնութագրող հատկանիշ: Արտահայտվում է իր խոսքերում և արարքներում անձի՝ ինքն իրեն հավատարիմ մնալու հանգամանքով.

5. **Անձնական կյանք** - ուսուցչի անձնական հարաբերություններն ու գործունեությունը, որոնք կապված չեն նրա մասնագիտական գործունեության կամ հասարակական կյանքի հետ.

6. **Ապարդեղեկաբանություն** – տեղեկության դիտավորյալ կամ ակամա խեղաթյուրում, ոչ ճիշտ տեղեկատվություն.

7. **Աշխատասիրություն** – հատկանիշ, որով բնութագրում է անձի՝ սեփական աշխատանքի նկատմամբ սուբյեկտիվ տրամադրվածությունը: Պահանջում է անձի կողմից առանձնակի ջանքերի գործադրում, աշխատանքային եռանդ.

8. **Արժանապատվություն** – էթիկական կատեգորիա է, որը հիմնվում է մարդու՝ հանրօգուտ գործունեության և առհասարակ դրական կենսակերպի արդյունքում շրջապատում ճանաչված լինելու, իր նկատմամբ դրական վերաբերմունք ակնկալելու, ուրիշների հարգանքը վայելելու խորապես հիմնավորված բարոյական պահանջի վրա.

9. **Բարեգործություն** –գործունեություն, որն ունի բարոյական դրական ուղղվածություն և օբյեկտիվ արդյունք, որի հետևանքները, որպես կանոն, օգտակար են շրջապատի մարդկանց համար.

10. **Բարերարություն**–կարիքավորներին ցուցաբերվող նյութական, բժշկական մշակութային և այլ օգնություն.

11. **Բարեսրտություն** – հատկանիշ, որով բնութագրվում են ազնիվ ու վեհ նպատակներով առաջնորդվող, բարոյական սկզբունքներին և գաղափարներին հավատարիմ անձնազոհ անձինք.

12. **Բարոյական ազատություն**– մարդու կողմից սեփական վարքի, գործողությունների և ինքնադրսևորման եղանակների ընտրության ազատություն, որը պայմանավորվում է նրա ներքին համոզմունքներով և բարոյականությամբ: Բարոյական ազատությունը ենթադրում է կատարած ընտրության համար մարդու պատասխանատվություն ուրիշների և ինքն իր առաջ.

13. **Բարոյական ընտրություն**– բարոյական գործունեության դրսևորման եղանակ, որը ենթադրում է անձի կողմից ինքնուրույն որոշում կայացնելու միջոցով վարքի այս կամ այն տեսակի կամ կոնկրետ արարքի գիտակցական ընտրություն.

14. **Բարոյական կոնֆլիկտ (բախում)**– իրավիճակ, երբ նպատակների կենսագործման և բարոյական նորմերի պահպանման համար ծագում է հակամարտությունը հաղթահարելու և ընտրություն կատարելու անհրաժեշտություն.

15. **Բարոյական նորմ**– բարոյական պահանջի տեսակ, որը անձի համար հանդես է գալիս որպես օրենք, պարտադիր կատարման ենթակա պահանջ.

16. **Երջանկություն** – էթիկական կատեգորիա է, ենթադրում է մարդու կողմից լիարժեք բավարարվածություն սեփական արարքներից, աշխատանքից, շրջապատում կատարվող իրադարձություններից, իր ամբողջ կյանքից.

17. **Զսպվածություն** – հատկանիշ, որը ենթադրում է անձի կողմից սեփական զգացմունքների կառավարում, անկախ բարդություններից՝ նպատակային գործունեություն ծավալելու կարողություն.

18. **Բարոյագիտություն**– գիտություն, որն ուսումնասիրում է բարոյականությունը, հասարակության կյանքում նրա ունեցած դերն ու առանձնահատկությունները, բարոյական արժեքների համակարգն ու ավանդույթները: Սահմանում է բարոյական ազատության և անձի պատասխանատվության սահմանները, նրա արարքների բարոյական գնահատականը.

19. **Էթիկայի հանձնախումբ** – Ուսուցչի բարոյական վարքագծի վրա հասարակական կարծիքի ներգործությունն իրականացնող հանձնախումբ, որն ընտրվում է ուսումնական հաստատության աշխատողների ժողովի կողմից.

20. **Թափանցիկություն** – ուսուցչի գործունեության հրապարակային բնույթ, նրա կողմից կազմակերպված միջոցառումների, դասերի, ելույթների, գործողությունների ուսումնասիրման և գնահատման պայմաններ.

21. **Ինքնագնահատական** – մարդու կողմից իր անձնային որակների, համոզմունքների, սեփական վարքի, գործողությունների, դրանց շարժառիթների բարոյական գնահատականը.

22. **Լավատեսություն** – շրջապատում տեղի ունեցող դեպքերի և իրադարձությունների մասին մարդու հայեցակետ, ըստ որի գոյություն ունի լավատեսական լուծում գտնելու իրական հնարավորություն.

23. **Կոռուպցիա** – սեփական օգուտի համար հասարակական ուժի շահագործումն է, որը կարող է արտահայտվել ամենատարբեր ձևերով՝ կաշառք, հասարակական բարիքների անօրինական տնօրինում, նեպոտիզմ (ընտանեկան կապերի շահագործում), օրենքների և նորմերի ձևավորում և փոփոխություն՝ հօգուտ անձնական շահի.

24. **Կրթական կարիքներ** – այն կարիքներն են, որոնք կոչված են ապահովելու բոլոր երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը՝ այդ թվում նաև՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում: Այս եզրույթն առաջացել է «Կրթություն բոլորի համար» երեխայի իրավունքը կյանքի կոչելու նպատակով և որպես ուղենիշ ու խնդիր, դրված է 2011-2015թթ. «Կրթության զարգացման պետական ծրագրում».

25. **Հակակոռուպցիա** – կոռուպցիայի հակառակ երևույթն է, որն ուղղված է կոռուպցիան կանխելու կամ դրա դեմ պայքարելու գործընթացին.

26. **Համբավ** – այս կամ այն անձի բարոյական կերպարի մասին շրջապատի մարդկանց մոտ գոյություն ունեցող կարծիք, որը ձևավորվել է նրա դրսևորած վարքի արդյունքում և ուղղակիորեն կապված է նրա բնավորության գծերի, հայացքների և անձնային որակների հետ.

27. **Հայրենասիրություն** – բարոյական սկզբունք, որը ենթադրում է հարգանք իր երկրում բնակվող ժողովուրդների պատմական անցյալի և ավանդույթների նկատմամբ, հպարտություն նրա էկոլոգիական, սոցիոլոգիական, մշակութային, նվաճումների համար, հոգատարություն նրա ներկայի և ապագայի նկատմամբ, վճռականություն՝ անսասան պահելու երկրի ազատությունն ու անկախությունը, սեր՝ դեպի հայրենի եզերքը.

28. **Հանդուրժողականություն** – համբերատար վերաբերմունք այլոց հետաքրքրությունների, մտքերի, դավանանքի, այլախոհության նկատմամբ.

29. **Հանրային կյանք** – ուսուցչի վարքը հասարակության մեջ և նրա հասարակական գործունեությունը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են նրա մասնագիտական գործունեության հետ.

30. **Հանրային շահեր** - ժողովրդի և պետության կողմից ընդհանուր ճանաչում ստացած խնդիրներ ու նպատակներ, որոնք համապատասխանում են իրավական և բարոյական նորմերին: Ուսուցիչների առնչությամբ այն ունի մեկ այլ դրսևորում ևս. դա հասարակության շահագրգռությունն է այն բանում, որ ուսուցիչները ծառայեն ժողովրդին ազնիվ, անաչառ ու արդար կերպով.

31. **Հանրային և պետական շահերին հասցված վնաս** - ուսուցչի կողմից մասնագիտական բարոյականության և վարքի նորմերի խախտման բացասական հետևանք, որի պատճառով մարդիկ կրում են նյութական կամ ոչ նյութական վնաս, կամ առկա է հասարակության օրինական շահերի ակնհայտ խախտում.

32. **Հավատարմություն** – հատկանիշ, որով բնութագրվում է մարդու վարքի բարոյական կողմը, որով առաջնորդվում է մարդն իր առօրյա կյանքում.

33. **Հարգանք անհատի նկատմամբ** - ուսուցչի կողմից բարի կամքի և հանդուրժողականության ցուցաբերում ինչպես սովորողների, այնպես էլ բոլոր մարդկանց նկատմամբ՝ անկախ նրանց անձնական հատկություններից, հասարակական կարգավիճակից, նյութական վիճակից, քաղաքական հայացքներից և կուսակցական պատկանելությունից.

34. **Հարգանք օրենքի և մարդու իրավունքների նկատմամբ** - իր անձնական կամ հասարակական կյանքում ուսուցչի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի դրույթների պահպանումը, իսկ այլ մարդկանց կողմից օրենքի խախտումների հետ առնչվելու դեպքում նման գործողությունների դադարեցման համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը.

35. **Հաշվեպահականություն** – ուսուցչի կողմից իր գործունեության վերաբերյալ պարբերաբար զեկույցներով, մեկնաբանություններով և հաշվետվություններով հանդես գալը, ուսումնասիրությունների համար անհրաժեշտ տեղեկություն տրամադրելը.

36. **Հեղինակություն** – որևէ անձի՝ համատեղ գործունեության պայմաններում պատասխանատու որոշումներ կայացնելու իրավունքի ճանաչում.

37. **Հեղինակային իրավունքի նորմեր** – Հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության եւ արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը, որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձևով, ներառյալ՝ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձևը, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից: Կարգավորվում է հատուկ օրենքով, որն էլ հենց սահմանում է Հեղինակային իրավունքի նորմերը.

38. **Հպարտություն** – բարոյական զգացում, որն արտահայտում է մարդու՝ բարոյական բարձր արժեքներին և ստանդարտներին սեփական անձի համապատասխանության, ներքին արժանապատվության, ինքնաբավության և անկախության գիտակցությամբ.

39. **Մանկավարժական էթիկա**– մանկավարժական գործընթացում մարդու բարոյական դիրքորոշումների յուրահատուկ դրսևորում, որն արտահայտվում է երեխաների նկատմամբ մանկավարժի ունեցած սիրով, մարդու և շրջակա աշխարհի մասին նրանց գիտելիքներ հաղորդելու, նրանց մեջ բանականը, խոհեմը, բարին և հավերժականը սերմանելու ձգտումով: Մանկավարժական էթիկան գիտություն է ուսումնադաստիարակչական գործընթացներում բարոյականության ձևավորման մասին, որը միաժամանակ ուսումնասիրում է այդ գործընթացների էթիկական խնդիրները.

40. **Մասնագիտական գործունեություն** - ուսուցչի պարտականությունների հետ առնչվող գործողություններ.

41. **Մասնագիտական համապատասխանություն և պարկեշտություն** – որոշվում է ուսուցչի՝ ՀՀ համապատասխան օրենքներով սահմանված պաշտոնի անձնագրին համապատասխանության աստիճանով.

42. **Մասնավոր շահեր** - ուսուցչի կամ նրան մերձավոր անձի նյութական կամ ոչ նյութական շահ, որը կարող է ազդել ուսուցչի որոշումների վրա՝ պարտականությունները կատարելիս.

43. **Մարդասիրություն**– բարյացակամ վերաբերմունք մարդու նկատմամբ, սիրո, ուշադրության դրսևորում, հարգանք դեպի մարդը և նրա անհատականությունը.

44. **Մեծահոգություն** –տե՛ս Բարեսրտություն.

45. **Մեծամտություն**– հատկանիշ, որը բնութագրվում է ուրիշների նկատմամբ անձի կողմից դրսևորված անհարգալից վերաբերմունքով: Սովորաբար լինում է եսասիրության, սեփականարժանիքները գերազնահատելու արդյունք.

46. **Ներում** – գործողություն, որը ենթադրում է դադարեցնել մարդուն նրա գործած անխոհեմ քայլի համար հանդիմանելը, նրա նկատմամբ կանխակալ վերաբերմունքը.

47. **Ներքին քննադատություն** – ուսումնական հաստատության ներսում կատարված քննադատություն, որը չի կարող հրապարակվել նրա սահմաններից դուրս.

48. **Նվեր** - նյութական արժեք ունեցող ցանկացած իր, հյուրասիրություն կամ ծառայություն, որ առաջարկվում կամ տրամադրվում է ուսուցչին անվճար կամ անիրատեսորեն ցածր գնով, եթե դա կապված է կամ կարող է կապված լինել նրա գործողությունների կամ որոշումների վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետ.



49. **Շահերի բախում** - իրավիճակ, երբ իր պարտականությունները կատարելիս ուսուցիչը ստիպված է կամ կարող է որոշում ընդունել, մասնակցել որոշում ընդունելուն կամ կատարել այլ գործողություններ, որոնք խախտում են հասարակության շահերը՝ հանուն սեփական կամ իր մերձավոր մարդկանց մասնավոր շահերի.

50. **Շփում** –մարդկանց միջև այնպիսի հարաբերությունների հաստատում և զարգացում, որոնց ընթացքում կատարվում է մտքերի, հույզերի, հայացքների, տեսակետների, աշխատանքի փորձի փոխանակում.

51. **Պահանջկոտություն** – մարդուն բարոյական բարձր պահանջների առաջադրում և դրանց իրականացման հարցում հետևողականության դրսևորում.

52. **Պատասխանատվություն** - մասնագիտական գործունեություն իրականացնելիս սեփական որոշումների և գործողությունների հետևանքների, հնարավոր օգուտի կամ վնասի համար ուսուցչի գիտակցված վերաբերմունքը, հետևանքների համար մեկնաբանություններ տալու պատրաստակամություն.

53. **Պարզականություն** – բարոյական պահանջ, որը բացահայտում է ըստ կենսագործունեության ոլորտի մարդուն վերագրվող գործողությունների (արարքների) բովանդակությունը.

54. **Սկզբունքայնություն** – ուսուցչի կողմից հանրային և մասնավոր կյանքում ազնիվ ու արժանավայել պահվածք, իր մասնագիտական գործունեության մեջ ապօրինի, անարժան և անբարոյական գործարքներից և միավորումներից խուսափելու հետևողական վարքագիծ, որը ենթադրում է բարոյական վարքի համընդհանուր նորմերի պահպանում՝ հիշելով, որ իրենից ակնկալում են վարքի ավելի բարձր չափորոշիչներ, քան ուրիշներից.

55. **Վստահություն** –մարդու կամ մարդկանց խմբի գործողությունների նկատմամբ անձի կանխակալ վերաբերմունք, որը հիմնված է նրանց իրավացիության, հավատարմության, ազնվության, բարեկրթության և բարեխղճության մասին անձի ունեցած համոզմունքների վրա.

56. **Տակր** – հատկանիշ, որով բնութագրվում է մարդու վարքի բարոյական կողմը: Ենթադրում է զսպվածություն, համբերատարություն, սիրալիր և քաղաքավարի վերաբերմունք, դրական բառապաշար.

57. **Փոխօգնություն** – միջանձնային հարաբերությունները բնորոշող ձև, որն ի հայտ է գալիս հետաքրքրությունների և նպատակների ընդհանրության պարագայում և ենթադրում է փոխադարձ սատարում, ջանքերի մեկտեղում.

58. **Քաղաքավարություն** – հատկանիշ, որով բնութագրվում է մարդու վարքի բարոյական կողմը: Հիմնվում է ուրիշների նկատմամբ մարդու ունեցած հարգանքի, ուշադրության, բարյացակամ վերաբերմունքի և նվիրվածության վրա.

59. **Օրինակելի վարք** - մասնագիտական գործունեություն իրականացնելիս, հասարակական կամ մասնավոր կյանքում ուսուցչի՝ վարքի ընդունված կանոններով առաջնորդվելը, ուրիշների համար օրինակելի լինելը: